մինչ Ստամպօլ եւ անտի մինչ Տրապիզոն, որչափ առաջ կայ, ամէնն Հոռոմ է. եւ ճերմակ ծովու, Սեւ ծովու երկու կողմանց եալուքն սաֆի հոռոմ են: Բայց այս տեղաց Հոռոմնին խիստ չար եւ զալում էին, Հայոց մեծ 100
թշնամի. երբ զմեզ տեսնէին՝ թքանէին եւ իշքիլ[4] կոչէին, որ է չուն եւ հերձուածող. եւ թէ ոք նոցա ամանէ հաց ուտէր կամ ըմպէր, իսկոյն կոտրատէին թէեւ դնոջ լինէր:

ԱՂԵՐՍՔ ՅՈՒՆԱՑ ԵՒ ՀԱՅՈՑ

Եւ չէ զարմանք, զի (Հոռոմք) նախնեաց 105
թշնամիք են Հայոց. թէ ոք կամի՝ թող կարդայ զՄիխայէլ գիրքն[5], Թօմայ պատմագիրն եւ այլն, թէ զինչ չարիք անցուցել են ի զլուխս նախնեաց մերոց. եւ որպէս բարձին զթագաւորութիւնս Հայոց մինչեւ Յոհան յՕձնեցին, որ գնաց առ Օմար հզօր արքայն Պարսից[6] եւ նորին էմիրնովք եւ հրամանաւ վարեց արտաքսեց զամենայն Հոռոմս եւ սուրբուն արարեալ ելից ծովն Պոնտոսի եւ զամենայն ծովեզերեայս: Զոր եւ նախ սուրբն Սահակ 115
հայրապետն մեր գնաց առ Մահմատ եւ անձնեաց զմեզ նմայ, թափելով զՀայք ժանտ եւ վատ նենկաժոտ ազգէն Յունաց, որ են հին թշնամիք մեր: Զոր եւ զայս ընթերցայ ի պատմագիրս, զի որչափ հոռոմ տիրէր՝ ոչ 120

97 ճէրմակ: — 115 ծովեզերեայս: — 119 ընթերցայ:

---

[4] *Շունաէ?*
[5] *Միքայէլ Ասորի, ժամանակագրութիւն:*
[6] *Այսինքն՝ ամիրայն Արաբացւոց:*